# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԵՍԵՍԹԻ-ն ՀՀՏՄ-ԵԱՃԱՊՁԲ-2024/02 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | աթոռներ | աթոռներ | աթոռներ | ՀՀ ՌԴ | "Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի պահանջներով նշված չափսերին համապատասխան, մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ։ Հիմնական կոնստրուկտիվ տարրերը պետք է պատրաստված լինեն փայտից կամ ФSU E0դասի։ Նշված տարիքային խմբի համար ընդհանուր չափսերը կարող են կազմել՝ նստելատեղի չափսերը՝ շուրջ 280x280 մմ, մինչև |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նստելատեղը բարձրությունը հատակից՝ շուրջ 240 մմ (համապատասխանեցնել տարիքային խմբի սեղանի համար սահմանված բարձրության հետ): Աթոռի հենակի բարձրությունը՝ 240 մմ: Աթոռի հենակը պետք է պատրաստված լինի 10 մմ հաստությամբ նրբատախտակից (կամ համարժեք կոնստրուկցիայով), չափսերը՝ 120x280 մմ: Մանկական աթոռը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից (հիմնականում՝ փայտից), պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, լաքապատված (էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով), անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ։ Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Աթոռի կոնստրուկցիան հավաքվում է շիպերով, պտուտակներով կամ համարժեք ամուր և շահագործման ժամանակ անվտանգ դետալներով: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ: Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): " |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԷՍԷՍԹԻ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/02 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |